**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-26/2020**
**21.12.2015թ. կնքված N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-26 պետական գնման պայմանագրի**

**ք. Երևան** **« 20 » « 02 » 2020թ.**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարին փոխարինող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և 12.112015թ. «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ի և «Կապավոր» ՍՊԸ միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրով գործող «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Սիմոնյանի, ով գործում է կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 21.12.2015թ. կնքված N **ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏՇԻԳ-16/1-26** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.3 կետերը և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1919-Ն որոշումը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 4.1 փոփոխել և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի 2020 թվականի համար ընդհանուր գինը կազմում է 140,647,853 (մեկ հարյուր քառասուն միլիոն վեց հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը,տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները»:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Գնման ժամանակացույցը համաձայն հավելված 1-ի:

1.3 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Վճարման ժամանակացույցը համաձայն հավելված 2-ի:

1.4 Հաստատել Համաձայնագրի 2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները համաձայն հավելված 3-ի:

1.5 Պայմանագրի 2.4 կետ կետը լրացնել նոր 2.4.4 ենթակետով և շարադրել այն հետևյալ խմբագրությամբ.

«2.4.4 Ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների ընթացքում ապահովել կազմակերպության ներկայացուցչի մասնակցությունը ճանապարհատրանսպորտային պատահարների դեպքի վայրում, անհապաղ տեղեկացնել պատվիրատուին դեպքի մասին, մասնակցել արձանագրության կազմմանը, հանդես գալ որպես կողմ պատվիրատուի անունից»:

1.6 Պայմանագրի 7-րդ «Այլ պայմաններ» բաժինը լրացնել նոր 7.10 և 7.11 կետերով և շարադրել դրանք հետևյալ խմբագրությամբ.

«7.10 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:
7.11 Կատարողը ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից)»:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2020թ հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում են մինչև 2020թ դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2.3 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ, Գեղարքունիքի մարզ գ. Ծովագյուղ, 1փ., տ.46 |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 08618778 |
| ՀՀ 900011012136 | ՀՀ 220203334978000 |
| գլխավոր քարտուղարին փոխարինող | տնօրեն |
| Հ. Բատիկյանի | Ն.Սիմոնյան |
| ------------------------------ /ստորագրություն/ | ------------------------------ /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26 գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Ծիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

**ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ**
**(2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| Հ/Հ | Աշխատանքի անվանումը | 2020թ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | 48,529,526 | 35,993,675 | 31,994,378 | 24,130,273 | 140,647,853 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 08618778
ՀՀ 220203334978000
տնօրեն
Ն.Սիմոնյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26 գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 2

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ (2020 թ. իրականացվելիք)**

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքներ | - | 33,970,668 | 33,970,668 | 73,725,099 | 73,725,099 | 73,725,099 | 106,919,266 | 106,919,266 | 106,919,266 | 140,647,853 | 140,647,853 | 140,647,853 | **140,647,853** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 08618778
ՀՀ 220203334978000
տնօրեն
Ն.Սիմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.

Հաստատված է
N ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26 գնման պայմանագրի
«20» «02» 2020թ. կնքված
Թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-26/2020 Համաձայնագրով
Հավելված թիվ 3

## 2020թ. Հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհների վիճակը, սպասարկման մակարդակները և սահմանային արժեքները

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնիկական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակ | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազ. դրամ/ | Ընդամենը /հազ. դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Պահպանման ժամանակաշրջանը` ՁՄԵՌ** | | | | | | | |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 51,2-կմ 73,2 | Միջպետական I | 22.00 | | Լավ | 22.00 | 1061.040 | 23342.880 |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 73,2-կմ80,92 | Միջպետական II-IV | 7.72 | | Լավ | 7.72 | 812.400 | 6271.728 |
| Գագարինի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 1.90 | | Լավ | 1.90 | 812.400 | 1543.560 |
| Սևանի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.69 | | Լավ | 2.69 | 812.400 | 2185.356 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ0-կմ1,1 | Միջպետական I | 1.10 | | Լավ | 1.10 | 1061.040 | 1167.144 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ1,1-կմ12.7 | Միջպետական II-IV | 11.60 | | Լավ | 11.60 | 812.400 | 9423.840 |
| Մ-14, Մ4-Շորժա-Վարդենիս կմ0-կմ12,2 | Միջպետական II-IV | 12.20 | | Միջին | 12.20 | 510.120 | 6223.464 |
| Հ-29, Սևան-Ծաղկունք-Զովաբեր կմ0-կմ16,8 | Հանրապետական II-IV | 16.80 | | Միջին | 16.80 | 309.480 | 5199.264 |
| Հ-53, Մ4-Սեմյենովկա-Մ4 կմ0-կմ11,8 | Հանրապետական II-IV | 11.80 | | Բավարար | 11.80 | 296.880 | 3503.184 |
| Հ78, Մ4-Սևանի թերակղզի կմ0-կմ 1,5 | Հանրապետական II-IV | 1.50 | | Լավ | 1.50 | 974.040 | 1461.060 |
| Հ84, Մ4-Սևան-Մ4 կմ0-կմ1,1 | Հանրապետական II-IV | 1.10 | | Միջին | 1.10 | 309.480 | 340.428 |
| **Ընդամենը** | | 90.41 | | | 90.41 | | 60661.908 |
| **Պահպանման ժամանակաշրջանը` ԳԱՐՈՒՆ-ԱՄԱՌ-ԱՇՈՒՆ** | | | | | | | |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 51,2-կմ 73,2 | Միջպետական I | 22.00 | Երաշխիք.ՄԵ(0) | Լավ | 18.40 | 729.84 | 13429.056 |
| | | | Լավ ՄԼ(I) | Լավ | 3.60 | 1228.200 | 4421.520 |
| Մ4, Երևան-Սևան-Իջևան-Ադր,սահման կմ 73,2-կմ 80,92 | Միջպետական II-IV | 7.72 | Լավ ՄԼ(I) | Լավ | 7.72 | 1038.240 | 8015.213 |
| Գագարինի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 1.90 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 1.90 | 1496.400 | 2843.160 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սևանի տրանսպորտային հանգույց | Միջպետական II-IV | 2.69 | Բավարար ՄԲ(II) | Միջին | 2.69 | 1496.400 | 4025.316 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ 0-կմ1.1 | Միջպետական I | 1.1 | Լավ ՄԼ(I) | Լավ | 1.1 | 1228.200 | 1351.020 |
| Մ10, Սևան-Մարտունի-Գետափ կմ1.1-կմ12.7 | Միջպետական II-IV | 11.60 | Լավ ՄԼ(I) | Լավ | 5.50 | 1038.240 | 5710.320 |
| | | | Բավարար ՄԲ(II) | Միջին | 5.78 | 1496.400 | 8649.192 |
| Մ14, Մ4-Շորժա-Վարդենիս կմ0-կմ12.2 | Միջպետական II-IV | 12.20 | Լավ ՄԼ(I) | Միջին | 10.00 | 700.800 | 7008.000 |
| | | | Բավարար ՄԲ(II) | Միջին | 2.20 | 1496.400 | 3292.080 |
| Հ29 Սևան-Ծաղկունք-Ջովաբեր կմ0-կմ16,8 | Հանրապետական II-IV | 16.80 | Լավ ՀԼ(I) | Լավ | 8.10 | 963.960 | 7808.076 |
| | | | Բավարար ՀԲ(II) | Միջին | 8.70 | 1304.640 | 11350.368 |
| Հ-53, Մ4-Սեմյոնովկա-Մ4 կմ0-կմ11,8 | Հանրապետական II-IV | 11.80 | | | 0.00 | | 0.000 |
| Հ78, Մ4-Սևանի թերակղզի կմ0-կմ 1,5 | Հանրապետական II-IV | 1.50 | Երաշխիք.ՀԵ(0) | Լավ | 1.10 | 454.920 | 500.412 |
| | | | Բավարար ՀԲ(II) | Միջին | 0.40 | 1304.640 | 521.856 |
| Հ84, Մ4-Սևան-Մ4 կմ0-կմ1,1 | Հանրապետական II-IV | 1.10 | Լավ ՀԼ(I) | Լավ | 1.10 | 963.960 | 1060.356 |
| Ընդամենը | | 90.41 | | | 78.29 | | 79985.945 |
| Ընդամենը Սևանի տարածաշրջանով | | | | | | | 140647.853 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02815457
ՀՀ 900011012136
գլխավոր քարտուղարին փոխարինող
Հ. Բատիկյանի

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Ծովագյուղի ՃՇՇ» ՍՊԸ
ՀՀ, Գեղարքունիքի մարզ գ. Ծովագյուղ, 1փ., տ.46
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 08618778
ՀՀ 220203334978000
տնօրեն
Ն.Սիմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ.